

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԵԼՔԸ (1995-2015)

«Յոյսը երբեք մարդս ամօթով չի ձգեր»
(Հռոմայեցիներու 5.5)
Մարիա Գաբրիելեան

Հանդիսանալով Հալէպի, Լաթաքիոյ, Քեսապի եւ Ճեզիրէի շրջաններու Հայ Առաքելական Համայնքի թեմական պատասխանատուութիւնն ու տիրութիւնը ստանձնող գլխաւոր կեդրոնը, Բերիոյ Հայոց Թեմը ոչ միայն համայնքի հոգեւոր կեանքի կարգաւորման առաքելութիւնը կատարած է եւ կը շարունակէ, այլեւ համայնքի կազմակերպման եւ բարգաւաճման նպատակով բազմաբնոյթ գործունէութիւն ծաւալած է եւ կը ծաւալէ:

Ձեկոյցս կը բովանդակէ թեմի կազմակերպական կառոյցի եւ վերջին քսանամեակի ընդհանուր գործունէութեան նկարագիրը:

Բերիոյ Թեմի բրգածեւ կառոյցը ունի հետեւեալ պատկերը.

Ա. Ազգային Երեսփոխանական Ժողով, որուն 37 անդամները կ'ընտրուին երկամեայ դրութեամբ, լրացուցիչ ընտրութիւններով (տասը տարուան համար): Ան թեմին օրէնսդիր իշխանութիւնն է:

Բ. Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութիւն, որ երկամեայ ժամանակաշրջանի համար կ'ընտրուի Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ: Ան կը հանդիսանայ գործադիր իշխանութիւնը, որմէ կը ճիւղաւորուին Ուսումնական, Տնտեսական, Կալուածային, Ընկերային Ծառայութեան, Դատաստանական, Թաղական-Հոգաբարձական եւ Կրօնական խորհուրդները: Վերջինս թեմին հոգեւոր առաքելութեան ծաւալումով կը զբաղի:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ՝ 1995-2015

Վերջին քսանամեակին Բերիոյ Հայոց Թեմի գործունէութիւնը կարելի է բաժնել ժամանակագրական հետեւեալ հատուածներուն.- ա) Նախապատերազմեան շրջան 1995-2010, բ) Պատերազմեան շրջան 2011-15., գ) Յետ պատերազմեան շրջան 20...(վերականգնումի նախատեսումներ):

Ա. ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ, 1995-2010

Տասնամեակներու ընթացքին Բերիոյ Թեմը հետզհետէ կազմակերպուելով, իր ընթացքը ուղղած է ի մասնաւորի Հալէպի, ուր կը բնակէր թեմին շուրջ 75,000 զաւակներուն մեծամասնութիւնը:

Տնտեսական պայմանները - հեռաւոր թէ մօտաւոր նախագիծերու գործադրման համար - խոչընդոտ չհանդիսանալու մտասեւեռումով, այս շրջանին (1995-2010) զարկ տրուեցաւ թեմին տնտեսական ենթակառոյցի ամրապնդման եւ բարգաւաճման:

1. Տնտեսական Ոլորտ. Տնտեսագետ թե՛ գործարար փորձառու անձնատիրութիւններէ բաղկացած տնտեսական եւ կալուածային խորհուրդներ աշխատանքի հրաւիրուեցան եւ իրաքանչիւր իր երկամեայ գործունէութեան ընթացքին արդէն իսկ գործող ձեռնարկները բարգաւաճեց եւ նոր նախաձեռնութիւններու հիմը դրաւ: Հայահոծ Նոր Գիւղի շրջանին մէջ ազգապատկան բնակարանային շէնքերու կողքին բարձրացան հայանուն նորերը՝ «Նայիրի», «Արցախ» եւ «Օշական»: Ազգային շէնքերու շարքին հայ ընտանիքներ հաստատուեցան «Կիլիկիա» եւ «Սիս» բնակարանային համալիրներ, որոնց ներքեւ գտնուող աշխատավայրերը հայ երիտասարդ արհեստաւորներու եւ առետրականներու համար յարմար գործավայրեր դարձան, իսկ սկզբնայարկերը՝ նոր շրջանաւարտ բժիշկներու թե՛ երկրաչափներու՝ աշխատանքային կեդրոններ: 2010 Հոկտեմբերին թեմին Ազգային Վարչութեան օրակարգերուն վրայ էին բնակարաններու կառուցման նոր ծրագիրեր:

Տնտեսական մտահոգութիւնը փարատելէ ետք կարելի էր գծագրել մարդակերտումի քարտէսները:

2. Ուսումնական եւ Կրթական բնագաւառները Բերիոյ Թեմի օրէնսդիր թե՛ գործադիր մարմիններու կարելորագոյն օրակարգերը հանդիսացան:

Թեմին հովանաւորութեան ներքեւ Սուրիոյ մէջ շարունակեց գործել 14 վարժարան: Հալէպի մէջ աշակերտութեան թիւի աստիճանական բարձրացումին հետեանքով, կարգ մը դպրոցներու դասարանները չէին բաւարարեր անոնց: Կը մտածուէր նոր կառոյցներու մասին...

Այս շրջանին Ազգային Կիւլպենկեան Վարժարանը օժտուեցաւ նոր ու արդիական շէնքով. հողատարածքը տրամադրուած էր համայնքին եւ համայնքը ստանձնեց անոր շինութիւնը:

Վարժարաններու շէնքային կառոյցներու բարելաման գործերը սկսան ընթացք առնել իրաքանչիւր վարժարանի հոգաբարձական մարմինին նաեւ Կալուածային եւ Տնտեսական խորհուրդներու սերտողութիւններով:

Մինչեւ 2010՝ շարունակուեցան սերտողութիւնները դպրոցաշինութեան համար յարմար հողատարածքներ գնելու: Աշակերտութեան թիւի աճը՝ հարցին արագ լուծում տալը անհրաժեշտ կը դարձնէր:

Վերջին տարիներուն թեմին դպրոցներէն նոր կառոյցով օժտուեցան Հալէպի Ազգ. Կիւլպենկեան Վարժարանը, Դամասկոսի Ազգ. Միացեալ Վարժարանը եւ Քեսապի Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարանը:

Հողաշերտի գնումէն, համապատասխան սերտողութիւններէն եւ արտօնագիրի ապահովումէն յետոյ, պատերազմին պատճառով Ազգային Հայկազեան Վարժարանի համալիրին շինարարական աշխատանքը հիմնարկէքէն ետք կանգ առաւ:

Հայեցի կրթութեան ու դաստիարակութեան խնդիրներն ու ծրագիրերը ոչ միայն վարժարաններու ներքին մտահոգութիւններն էին, այլեւ՝ թեմին զլխաւոր մարմիններուն: Երկար սերտողութիւններէ, քննարկումներէ եւ

խորհրդաժողովներէ ետք նախակրթարաններն ու Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանը օժտուեցան հայերէն խնամուած դասագիրքերով:

2009ին, լոյս տեսան ազգային մանկապարտէզներու նոր դասագիրքերը՝ մանկավարժարական համապատասխան սկզբունքներով եւ ուղեցոյցներով: Լոյս տեսան նաեւ կրօնի դասագիրքեր՝ Սուրիոյ հայ երեք համայնքներու դպրոցներուն համար:

Հայեցի կրթութեան աշխատանքները քայլ պահեցին ճարտարարուեստի նորարարութիւններուն հետ եւ ազգային վարժարաններուն միջեւ այս մարզէն ներս դրական մրցակցութիւն մը ընթացք առաւ:

Այս աշխատանքներուն մեծապէս կը նպաստէին ՀՀ Կրթութեան Նախարարութեան կողմէ սկզբնապէս երկամեայ դրութեամբ կազմակերպուող հայկական գիտելիքներու ողիմպիականները:

Թեմին հովանաւորութեամբ եւ հոգատարութեամբ տարեկան դրութեամբ ազգային վարժարաններու ուսուցիչներ կը մասնակցէին ՀՀ Կրթութեան Նախարարութեան կազմակերպած ուսուցիչներու վերաորակաւորման դասընթացքներուն: Թեմը իր մասնակցութիւնը կը բերէր նաեւ ՀՀ Կրթութեան Նախարարութեան կազմակերպած Համահայկական Կրթական Խորհրդաժողովներուն:

Թեմին տարածքին, նուազագոյնը տարեկան երկու խորհրդաժողով կամ գիտաժողով կը կազմակերպուէր՝ կրթական եւ ուսումնական մարզերու առաւել բարգաւաճման նպատակով:

Վերջին տարիներուն ազգային վարժարաններու ուսուցիչներուն համար ամառնային արձակուրդի կեցութիւն ապահովուած էր Քեսապի մէջ:

Այս աշխատանքներուն շարունակականութիւն ապահովելը կը պահանջէր համապատասխան մարդուժի ապահովում: Նկատի առնելով մարդուժի պատրաստութեան գերկարեւոր ծրագիրը՝ 2009էն սկսեալ Ազգային Վարչութեան եւ Ազգային Երեսփոխանական Ժողովները զբաղեցան այս հարցով: Այս ծրագիրին համար յառաջացաւ յատուկ մարմին, որ մշակեց համապատասխան ծրագիր: Սկզբնապէս թեմին ծրագիրներուն պահանջած մասնագիտութիւններու մէջ հմտացած երիտասարդ ուժեր պատրաստելու համար գործուղումներ կատարուեցան Սուրիոյ պետական համալսարանները: Հոգացուեցան նպատակամէտ ուսում ստացող սաներու ուսումնառութեան ծախսերը: Նոյն շրջագիծէն ներս ազգային վարժարաններու համալսարանաարտ ուսուցիչներուն դիրութիւններ ընծայուեցան՝ կրթական գործի պատրաստուածութեան մագիստրոսի վկայականի տիրացման համար կրթաթոշակի յատկացումներէն օգտուելու: Այս աշխատանքը ընդհատեցաւ 2012ին, Սուրիոյ պատերազմին պատճառով:

Թեմին գործունէութիւնը կը պահանջէր, որ ի գործ դրուած աշխատանքը իր արձագանգը գտնէր **մամուլին** մէջ:

Վերջին 20 տարիներուն, Բերիոյ Հայոց Թեմը մամուլի եւ հրատարակչական բնագաւառին մէջ յատկանշական նուաճումներ ար-

ծանագրեց: Յատկապես՝ վերջին տաս տարիներուն: Եթէ 1975-95 տարիները կարելի է անուանել շինարարական բարգաւաճման շրջան, ապա՝ 1995-2015 շրջանը պէտք է կոչել հրատարակչական բարգաւաճման շրջան, որուն վերջին նուաճումը դեռ համրուած օրեր առաջ Հալէպի մէջ լոյս տեսած *Նարեկ* աղօթամատենան է:

Այս շրջանին Բերիոյ Թեմի հովանաւորութեամբ Հալէպի մէջ լոյս տեսան.-

ա. Ուխտ Հոգեւոր Մատենաշարի գիրքերը.

բ. Այգ Գրական-Պատմական Մատենաշարի գիրքերը (ցարդ լոյս տեսած են 31 կրօնական, գրական եւ մշակութային գիրքեր).

գ. Մանկական Մատենաշարի գիրքերը (ցարդ լոյս ընծայած է 5 հատոր).

դ. *Տաթևի Հայագիտական Տարեգիրքը* (սուրիահայ, հայրենի, արտասահմանի հայ թէ օտար բանասէրներու, պատմաբաններու աշխատակցութեամբ):

ե. *Օշական* կիրակնօրեայ լրատուն (2006էն մինչեւ օրս):

զ. *Վրակ*, Ուսումնական Խորհուրդի աշակերտական թերթիկը:

է. *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրքը*:

ը. *Երթ Սուրիահայ Գրողներու Տարեգիրքը*:

թ. *Նոր Կրակարանի* եւ *Սաղմոսագիրքի* տպագրութիւնները:

ժ. Ազգային վարժարաններու եւ ճեմարանի աշակերտական եւ շրջանաւարտներու պաշտօնաթերթեր (*Ծիլեր*, *Աշխատանք*):

ժա. Զանազան այլ հրատարակութիւններ:

Մամուլի եւ քարոզութեան բնագաւառին մէջ առանձնապէս պէտք է յիշատակել Բերիոյ Հայոց Թեմի անունով լոյս տեսնող *Գանձասար* ՀՅԴ օրկանը: Ան իբրեւ շարունակութիւն *Օշական* պաշտօնաթերթին 1993էն իվեր լոյս կը տեսնէ որպէս շաբաթաթերթ, կը հանդիսանայ թեմի գործունէութեան հայելին եւ Սուրիոյ հայ կեանքի արձագանգը: *Գանձասարը* նաեւ բեմ կը հանդիսանայ սուրիահայ յօդուածագիրներու տարբեր նիւթերու քննարկումներուն:

Գանձասարը Սուրիոյ 2011ին դաժան պատերազմին շարունակեց անխափան լոյս տեսնել, եւ սուրիահայ համայնքին գործունէութեան, ծրագիրներուն, աշխատանքներուն, նոյնիսկ գոյութեան մասին ապատեղեկանքներու հերքման, սրբագրման եւ ճշտման մէջ մեծ դեր ունեցաւ: Ան իր դիմագրուած բազմաբնոյթ դժուարութիւններուն մէջ, 23 Ապրիլ 2015ին լոյս ընծայեց Հայոց Յեղասպանութեան 100ամեակին նուիրուած իր բացառիկը, սուրիահայ գրողներու աշխատակցութեամբ:

3. Քրիստոնէական Դաստիարակութեան Բնագաւառ. Վերջին 20 տարիներուն այս մարզը մեծապէս աշխուժացաւ, ունեցաւ համապատասխան վարչութիւն, իր շուրջ համախմբեց համայնքի երիտասարդութիւն եւ մղեց զանոնք երիտասարդութեան քրիստոնէական

դաստիարակութեան առաքինի սկզբունքներու ընդհանրացման համար միջոցներ որոնելու: Թեմիս Առաջնորդ, հօր անմիջական հոգատարութեամբ գործող այս մարմինը սեմինարներ կազմակերպեց, խորհրդաժողովներ հրաւիրեց, դասախօսական շարքեր նախաձեռնեց եւ յաջողեցաւ հայ երիտասարդութիւնը հայ եկեղեցւոյ աղերսել:

Համայնքին ծիրին մէջ, դաստիարակչական եւ մշակութային մեծ նպաստ ունեցաւ անոր գործունէութիւնը, շաբաթական հերթականութեամբ ընթացող Սուրբ Գիրքի սերտողութիւնները, ատարանական համարներու մեկնութեան հանդիպումները, աստուածաշնչական գիտելիքներու մրցաշարքերու թէ կրօնական բնոյթի դասախօսութիւններու կազմակերպումը:

Այս բնագաւառին մէջ իրենց գործունէութեամբ յատկանշուեցան թեմին կիրակնօրեայ դպրոցները, նոյնիսկ տագնապի ծանր օրերուն:

Համայնքի դաստիարակչական գործին մէջ իր իւրայատուկ տեղը ունեցաւ «Նախամուսնական Ծրագրատրում» նախագիծը: Ան զբաղեցաւ նշանախօսութեան ընթացքի մէջ գտնուող զոյգերու ամուսնական կեանքի պատրաստութեան գործով, կազմակերպելով ընկերաբանական, բժշկական եւ կենցաղային թեմաներով դասընթացքներ ու տուեալ մարզերու մէջ մասնագէտներու եւ հոգեւոր հայրերու կողմէ զոյգերու հետ առանձին հանդիպումներ:

4. Մշակութային Բնագաւառ. Այս շրջանին իրականացած մշակութային այլ գործունէութիւններէն կարելի է լուսարձակի տակ առնել հետեւեալները.-

Զարկ տրուեցաւ երգչախումբերուն. կազմուեցան «Նարեկ», «Լոյս», «Սաղմոս», «Շողակաթ», «Օրհնութիւն» երգչախումբերը, շարունակեց գործել Ուսումնական Խորհուրդի «Մեսրոպ Մաշտոց» երգչախումբը:

Վերաշխուծացան Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ շրջափակին մէջ գործող «Զարեհեան» Գանձատան աշխատանքները: Գանձատունը՝ իբրեւ մշակութային իւրօրինակ երեւոյթ, կը գործէր Հալէպի մէջ մինչեւ պատերազմին սկիզբը:

Հիմնադրուեցաւ Ազգային Կեդրոնական Գրադարանը, իր ատելի քան 10,000 հայերէն եւ օտարալեզու գիրքերով եւ մամուլի հաւաքածոներով:

Բացուեցաւ «Գ. Եսայեան Մշակութային Հանդիսասրահ»ը, որպէս Հալէպի մեծագոյն եւ գեղեցկագոյն հայկական սրահներէն մէկը, որ կը շարունակէ գործել մինչեւ օրս:

Օշական Գրատունը, որ կը գործէր Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ տարածքին մէջ 1989էն ի վեր, առճակատումի թէժ շրջանի մէջ յայտնուելէ ետք փոխադրուեցաւ համեմատաբար ատելի ապահով Ազգային Կիւլպենկեան Վարժարան, ուր կը շարունակէ իր աշխատանքը:

Ընթացք առին Տէր Զօրի Նահատակաց Համալիրի, թանգարանի եւ Մարկատէի յուշահամալիրի աշխատանքները²:

Կատարուեցան Քեսապի Գարատուրանի ու Քամիշլիի եկեղեցիներու շինարարութիւնները:

Յատուկ ուշադրութեան եւ խնամքի արժանացան թեմին արխիային աշխատանքները:

Սուրիահայ Գրողներու Համախմբում. Վերջին տասը տարիներուն, առաջնորդ հօր անմիջական հովանաւորութեամբ եւ ներդրումով հետզհետէ առաւել հունաւորուեցաւ Սուրիահայ Գրողներու Համախմբումը, որ մտաւորականութեան նոր երանգ ու մշակութային աշխատանքի նոր հեռանկարներ կը բանար սուրիահայութեան համար: Ան պատերազմի այս տարիներուն - սակաւաթիւ անդամներով - շարունակեց գործել:

Այս համախմբան կը պատկանի *Երթ Տարեգիրքը*:

Առնչակից Այլ Աշխատանքներ. 2010ին յառաջացաւ Սուրիահայ Գործարարներու Համախմբումը, համապատասխան ծրագիր-կանոնագիրով եւ աշխատանքի ապահովման գրասենեակով:

Յարատեւ ջանքերէ ետք 2011ին Սուրիոյ հայ առաքելական համայնքը ունեցաւ իրեն յատուկ «Անձնական Իրաւանց Օրէնք»ը, որ պետական վաւերացում ստացաւ երկրի նախագահին կողմէ, Յունուար 2013ին:

Բ. ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ, 2011-15

Անկանխատեսելի իրադարձութիւններով յատկանշուած Սուրիոյ պատերազմը՝ 2011ին երկրի հարաւային շրջաններուն մէջ բռնկելէ շուրջ 16 ամիս ետք բոցավառեց Միջին Արեւելքի սփիւռքեան համայնքներուն մէջ իր կազմակերպութեամբ, աշխուժութեամբ, բեղուն գործունէութեամբ ու մարդուժի պատրաստութեամբ իւրայատուկ տեղ գրաւող Հալէպ քաղաքն ու շրջակայքը:

Օրհասական պահեր էին հալէպահայութեան համար: Բերիոյ Հայոց Թեմը այդ օրհասական պահուն գրկեց իր ժողովուրդը... թեմական ոչ մէկ խորհուրդ, մարմին, յանձնախումբ դադրեցաւ գործելէ: Կրթական հաստատութիւնները շարունակեցին բանիլ: Մշակութային գործունէութիւնը չդադրեցաւ, հրատարակչական գործը շարունակուեցաւ: Միակ տարբերութիւնը թուապատկերներու եւ վայրերու փոփոխութիւններն էին:

Ապահովական, կենցաղային թէ տնտեսական անտանելի տագնապներուն պատճառով համայնքի զաւակները իրենց հայեացքը կրկին սեւեռեցին գաղթի ճամփաներուն: Ոմանք ներգաղթեցին հայրենիք, ոմանք ժամանակաւոր, ուրիշներ մնայուն գաղթեցին հեռաւոր ափեր: Այսպէս, համայնքին թիւը մեծապէս նուազեցաւ:

Իսկ համայնքային հաստատութիւններու տեղերու փոփոխութիւնը կատարուեցաւ երբ կարգ մը եկեղեցիներ ու դպրոցներ, նաեւ՝ Ազգ. Առաջնորդարանը գտնուելով ճակատումի թէժ շրջաններու մէջ փոխադրուեցան համեմատաբար աւելի ապահով վայրեր: Ձեւը փոխուեցաւ, սակայն

խորքը՝ մնաց նոյնը: Սուրիահայ համայնքը մնաց կենսունակ եւ պատնէշի վրայ՝ իր եկեղեցիներով, դպրոցներով եւ ակումբներով:

Նիւթական պարտաւորութեան կողքին բարոյական պարտաւորութիւն ունէր Բերիոյ Հայոց Թեմը Հալէպէն մեկնիլ չփափաքողներուն հանդէպ: Հարկաւոր էր յորդորել համայնքին զաւակները, ուժ ներշնչել անոնց եւ խօսքով ու գործքով զգացնել թէ թիկունք կը կանգնի անոնց: Այդպէս ալ եղաւ: Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի գրասենեակներուն աշխատանքները բազմապատկուեցան, ճնշող պայմանները սաստկացան, բեռը ծանրացաւ եւ մարդուժը սակաւեցաւ, այդուհանդերձ աշխատանքային թերութիւններ չարձանագրուեցան եւ ոչ միայն Սուրիա մնացողներուն այլեւ մեկնողներուն պահանջքները բաւարարուեցան:

Ներկայիս, Բերիոյ Հայոց Թեմը, նստավայրով եւ շրջաններով, կը շարունակէ իր աշխատանքները իր բոլոր բնագաւառներուն, մանաւանդ ծառայողական բնագաւառին մէջ:

Սուրիոյ ժողովուրդին, ազգային թէ կրօնական փոքրամասնութիւններուն մէջ թիւի առումով փոքր տոկոս կազմող սուրիահայ համայնքը՝ իշխանութեան թէ ընդդիմադիր ուժերու հետաքրքրութեան առարկան էր: Բանական էր այս մօտեցումը, քանի որ բոլորին համար տեսանելի էր այս համայնքին կազմակերպութիւնը, օրինապահութիւնը, անվերապահ ծառայութիւններն ու զոհաբերութիւնը: Չորս տարուան ընթացքին պատահած աղիտալի գլխաւոր երկու փորձանքներուն՝ Յունիս 2014ի Նոր Գիւլի եռօրեայ անընդմէջ ոմբակոծման եւ Ապրիլ 2015ի Սիւլեյմանիէի հրթիռակոծման ժամանակ, աղէտեալ շրջաններու բնակիչները, օգնութեան կանչերու արձագանգող կողմերը թէ պաշտօնական պատուիրակութիւնները չթաքցուցին իրենց հիացմունքը իտես Բերիոյ Հայոց Թեմի ժողովրդանուէր ծառայութեան: Այսպէս, Վրացեան Կեդրոնին մէջ նոր կայք հաստատած Ազգային Առաջնորդարանի գրասենեակները՝ 10 Ապրիլի ոմբակոծումին մեծապէս վնասուելէ ետք, Ապրիլ 12ին արդէն վերականգնած էին եւ դիմորդներ կ'ընդունէին:

Գ. ՅԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ, 2015-... ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ...

Տակաւին յոյսի ճրագը կը լուսաւորէ սուրիահայութեան միտքն ու հոգին: Տեղի ունեցած տեղաշարժերուն առընթեր, տակաւին սուրիահայ ուշագրաւ թիւ մը կ'ուզէ մնալ Սուրիոյ՝ յատկապէս Հալէպի մէջ: Հալէպի մէջ տակաւին ոչ մէկ դպրոց կամ եկեղեցի փակուեցաւ: Տակաւին համայնքը կանգնուն է: Այս մէկը կարելի է հաստատել ոչ միայն Կիրակի օրերը եկեղեցի այցելելով, այլեւ նոյնիսկ շաբթուան օրերուն սրահներու մէջ կազմակերպուած ձեռնարկներուն ներկայ գտնուելով: Կարելի է նաեւ պահ մը կանգնիլ Արամ Մանուկեան ժողովրդային Տան մուտքի ցուցափեղկին դիմաց եւ տատամսիլ կայանալիք ձեռնարկներու յայտարարութիւններէն:

ո՞րմէկը կարողալ կամ ո՞րմէկը քաջալերել: Կարելի է Կիրակի առաւօտները երթալ հայկական մարզական կամ սկաուտական որեւէ միութեան դաշտ եւ տեսնել տարազաւոր միութենականներու տակաւին յուսադրիչ շարքերը: Կարելի է ներկայ գտնուիլ Հալէպի մէջ գործող երեք, չորս, հինգ պարախումբերու ելոյթներուն եւ դիտել արուեստասէր երիտասարդներուն ոգեւորութիւնը, կարելի է ներկայ գտնուիլ «Զուարթնոց» երգչախումբի ելոյթներուն, Պարոյր Սեւակի նուիրուած ձեռնարկին, Կոմիտասի նուիրուած հանդիսութեան եւ Մարտ ամիսէն սկսեալ մինչեւ օրս տակաւին շարունակուող Հայոց Յեղասպանութեան 100ամեակի միջոցառումներուն:

Այս պատկերին իտես կարելի՞ է յուսալքուիլ, կարելի՞ է համոզել լքել համայնքը... թէ՛ պէտք է մտածել վերականգնումի մասին: Վերականգնումի ծրագիրերը կրնան ծիծաղաշարժ թուիլ անոնց համար, որոնք լաւապէս չեն ճանչնար սուրիահայ, յատկապէս հալէպահայ համայնքը: Իսկ ճանչցողներուն համար Հալէպի վերականգնումը անհրաժեշտ է:

Ուշ կամ կանուխ պատերազմը պիտի աւարտի: Սուրիոյ անկանխատեսելի սկսած պատերազմը կրնայ անկանխատեսելիօրէն աւարտիլ: Պէտք է պատրաստ ըլլալ վերականգնման եւ՝ ծրագիրերով

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Հայերէնի Դասագիրքս, 1995, Անդաստան, 2008 խմբ.՝ Յակոբ Զօլաքեան:

² Թեմի տարածքին համարեա բոլոր շրջաններուն մէջ կան Հայոց Յեղասպանութեան նուիրուած յուշակոթողներ:

The Cultural Revival of the Beria Prelacy (1995-2015)

(Summary)

Maria Kaprielian

The paper describes the functional activities of the Armenian Orthodox Church Beria Prelacy in the last twenty years (1995-2015) and covers almost all geographic Syria, specifically the Aleppo, Coastal and Jezira districts.

In brief, the paper presents the administrative structure of the Prelacy and its four basic types of organizational activities, namely education, public relations and publications, Christian education and nurturing the new generation. It details the extent of work done in these fields, as well as the purpose, results, trends, and difficulties that such an endeavor faces.

The paper notes that due to the war in Syria, the Prelacy reshaped itself and made accommodations to deal with war emergencies and to address the growing challenges.

The paper concludes with a brief description of the current conditions of the Prelacy and the course which will be taken by the Prelacy in the post-war period.